

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

**5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)**

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2017թ. հունվար-դեկտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

**1.Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի**  
(հաշվարկված՝ ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների)

|                                | Ամբողջ բնակչություն | Կին     | Տղամարդ |
|--------------------------------|---------------------|---------|---------|
| 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ | 2 998.6             | 1 569.5 | 1 429.1 |
| 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ | 2 986.1             | 1 567.3 | 1 418.8 |
| 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ | 2 972.9             | 1 560.8 | 1 412.1 |

1 000 մարդ

**2. ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի 2016թ.<sup>1</sup>**

|                                  | Ամբողջ բնակչությունը | Կին  | Տղամարդ |
|----------------------------------|----------------------|------|---------|
| <b>Հայաստանի Հանրապետություն</b> | 75.0                 | 78.3 | 71.6    |
| Քաղաքային                        | 75.6                 | 78.4 | 71.7    |
| Գյուղական                        | 74.7                 | 78.1 | 71.3    |

տարի

**3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)**

|                                       | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---------------------------------------|----------|----------|--------|
| 2015թ. հունվար-դեկտեմբեր              | 8.8      | 8.2      | 9.4    |
| 2016թ. հունվար-դեկտեմբեր <sup>ժ</sup> | 8.5      | 7.3      | 9.9    |
| 2017թ. հունվար-դեկտեմբեր              | 8.1      | 7.6      | 8.7    |

1 000 կենդանի ծնվածի հաշվով

**4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)**

|                                       | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---------------------------------------|----------|----------|--------|
| 2015թ. հունվար-դեկտեմբեր              | 10.4     | 9.5      | 11.2   |
| 2016թ. հունվար-դեկտեմբեր <sup>ժ</sup> | 10.1     | 8.5      | 11.5   |
| 2017թ. հունվար-դեկտեմբեր              | 9.5      | 8.7      | 10.2   |

1 000 կենդանի ծնվածի հաշվով

**5. Մայրական մահացության գործակիցը՝ 2015-2017թթ. համար, 100 000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 18.3 (22 դեպք), 2012-2014թթ. արձանագրված 19.6 (25 դեպք) համեմատ:**

<sup>1</sup> Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

7. Ուսումնասրության միջին տևողությունը դպրոցներում 2016/2017 ուսումնական տարում կազմել է 12 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2017թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1 262 193 դրամ (2 615 ԱՄՆ դոլար կամ 2 349 եվրո):

14. Գործազրկության մակարդակը<sup>1</sup> 2017թ. հուլիս-սեպտեմբերին (III եռամսյակ) կազմել է 16.5%, կանանցը՝ 16.7%, տղամարդկանցը՝ 16.3%:

15. 2017թ. հուլիս-սեպտեմբերին (III եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված<sup>1</sup> է եղել ՀՀ բնակչության 38.4%-ը, այդ թվում կանանց՝ 34.5%-ը և տղամարդկանց՝ 43.2%-ը:

---

<sup>1</sup> Ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա: